ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЕРИЯ ЦАХКАЛАНДЖ

No 28
« 05 » « 06 » 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի «31» մայիսի կայացած թիվ N4 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 5 էջ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ [illegible]
Մուտք N 5211-12
«06» 06 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

# ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2012 թվականի N 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | [signature] | | |
| 2. Դավթյան Գեորգ | [signature] | | |
| 3. Պողոսյան Մխիթար | [signature] | | |
| 4. Առաքելյան Վաչագան | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՆՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու «31» մայիսի 2012թ.
N-1 որոշման

1. Օրակարգի հաստատում:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

2. Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N2-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

3. Սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն տալու մասին:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

# ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2012 թվականի N 2-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ N2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Բյուջեի եկամտային մասում կատարել լրացում հողի հարկի 4541.7 հազար դրամին ավելացնել 200.0 հազար դրամ և տալ 01-1-1 հատվածի 4212 հոդվածին:

2. Բյուջեում կատարել փոփոխություն.

1) 01-1-1 հատվածի 4239 հոդվածի 300.0 հազար դրամից 200.0 հազար դրամ տալ 01-1-1 հատվածի 4212 հոդվածին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | | | |
| 2. Դավթյան Գևորգ | | | |
| 3. Պողոսյան Մխիթար | | | |
| 4. Առաքելյան Վաչագան | | | |

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***ՍԱՆՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

# ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2012 թվականի N 3

## ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի հինգերորդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Ծաղկալանջի գյուղական համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն հատկացնել համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Դավթյան Գևորգ | | | |
| 2. Պողոսյան Մխիթար | | | |
| 3. Երվանդյան Երվանդ | | | |
| 4. Առաքելյան Վաչագան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու «31» մայիսի 2012թ.
N-3 որոշման

# ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՑՈՒՑԱԿ

1. Մանուկյան Մայրանուշ 35.000 դրամ
2. Գրիգորյան Վալոդյա 30.000 դրամ